



1999

ԳԻՆԵ ՏԱՍԸ ԿՈՊԵԿ.



ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ուսման վերայ

669

ԱռM 8 . 7 1781 (լուսապատճենած ձևով)

ԹԻՖԼԻՍ

Վե տպոգրաֆի Ամբարցմա Թնֆայանց և Բ-

1874

Ltn
1212

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ  
ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳՐԻ

Ներկայ տարու 17 և 18 համարներից առնուած.

Дозволено цензурою Тифлисъ, 1874 г. 8 Мая.

29. 1216

4/212 - 60

Հ Ա Մ Ա Ր Ա Հ Ա Ր Ա Յ Ա Ֆ

Մ Ա Յ Տ Ե Ն Ի Լ Ե Զ Ո Ւ Ի  
Ա Խ Ո Մ Ա Ն Վ Ե Ր Ա Ց .

Մայրենի լեզուի նշանակութիւնը այնքան  
պարզ է իսրաքանչիւր ուսուցչի համար, որ ա-  
մեննեն հարկաւոր չէ այստեղ որ և իցէ բան  
առել նորա մասին, առաւել կարեսը էր ցոյց  
տալ այդ առարկայի մատակարարելու եղանա-  
կը, որի մասին ես կայսատեմ իմ հայեացքը  
բացայստել. Ամենից առաջ որէոք է նկատել,  
որ մեր մէջ մայրենի լեզուի դասասուութեան  
ընթացքը կարգաւորելիս՝ հարկաւոր է չեղուիլ  
այն ձեից, որ ընդունվում է ուրիշ լեզուների  
մէջ. ըստ որում Հայոց լեզուի ուսման հանգա-  
մանքները մի փոքր ի շատէ բարձր ուսումնա-  
րանում պահանջում են զուգակից դասասուու-  
թիւն զրաբարի և աշխարհաբարի. Աշխարհա-

բարի և գրաբարի զուգակից զասատաւութիւն առելուց չըպէտք է՝ եղբակացնել սակայն, որ առաջին իսկ տարիներից հարկաւոր է խառնել մանուկների դասերի մէջ նրանց անհասկանալի զրոց լեզուն, որ կընչանակէր ընկղմիլ այն մոլորութեան մէջ, որին հետեւում էին մեր անցեալ տարիների ուսուցիչները:

Այդ բանի համար պէտք էր հետեւ մանկավարժութեան մէջ ընդունուած այն առողջամիտ մետօդին, որ տանում է հեշտից ու ծանօթից դէպի գժուտըն ու անծանօթն, այսիւշ քըն, պէտք էր աստիճան առ աստիճան և փափր առ փափր աշխարհաբարի հետ կցորդել գրաբարը աշխատելով այդուամենայնիւ չը ձանրաբեռնել մանկան զլուխը աւելորդ գիտելիքներով նորա մասին, իսկ այստեղ մայրենի լեզուի դասատուութեան եղանակը առաւել կանոնաւոր կերպով ցոյց տալու համար՝ բաժանենք այն յետադայ մասերի:

- ա) Դասատուութեան մետօդ,
- բ) Գրադիտութեան սկիզբն,
- գ) Ընթերցանութիւն,
- դ) Քերականութիւն,
- ե) Գրաբար լմզու,
- զ) Գրաւոր աշխատանք:

## Ա. Մ Ե Մ Պ Օ Դ.

Ուսումնական շրջանի առաջին իսկ օրից մկսած մինչև վերջինը պէտք է ջանալ, որ ուսուցչի զասահուսութեան եղանակն արթնացնէ ու պահպանէ մանկական ուշադրութիւնը, իբրև կենդանի մասնակցութիւն աշակերտի կողմից ուսման մէջ, երբ աշակերտը ուշագիր է այն ժամանակը միայն կարող է թափանցել նորա հոգու մէջ ամեն մի հաղորդուած զիտելիքը: Մինչև որ ուսուցչը չըջանայ արթնացնել ու պահպանէլ աշակերտի ուշադրութիւնը, ուսումնական ամենելին յաջող չի ընթանալ:

Բայց գորա համար նա ընդունակ պիտի կինի միշտ նորանոր հարցաւիրելի նիւթեր ներս բերել դասերի մէջ: (Սորանից չըպէտք է եղբակացնել սակայն, որ հարկաւոր է անդադար առաջարկել մանուկների ուշադրութեանը բազմութիւն առարկաների): Օդտակար է խօսելով մի առարկայի սասին՝ հետազօտել նորան զանազան կողմներից, արծարծելով նորա մէջ միշտ նորանոր յատկութիւններ:

Աշակերտը ուշագիր է, երբ նա սիրում է հաղորդելի առարկան, սիրում է, երբ զա զըրաւում է նորան և զրաւում է, երբ նորան

դաս են տալիս իւր զարգացման աստիճանին համեմատ, նորան հասկանալի նիւթեր:

Գրաւում է մանկան այն գասը, որոյ բովանդակութիւնն առած է նորա հանապազօրեայ սովորական զღանից, նորա ընտանեկան, փողոցային և ընկերական կեանքից, սիրում է նա այն դասը, որ չի հալորդվում նորան անծանօթ ու ցամաց եղանակով, այլ որին տալիս են մի կենդանի և սովորական ձև:

Երբ մանուկը մտնում է ուսումնարան, ոչ թէ միայն չէ կարուանում, իւր ընտանեկան դաստիարակութեամբ, որքան և իցէ չնորհքով կարդալ ու գրել, այլ և նա իւր զիսում չի ունենում ոչ մի որոշ հասկացողութիւն. Ըստհակառակների ամենայն բան, որպէս և նորա խօսքը ընդհատ է մինում, անկազ ու անկերպարան: Այդ ժամանակ՝ նորա հոգեկան կարողութիւնները քնած են և կարօտ գրգուման: Խօսակցական մնաողն, ունենալով զարթուցիչ բնաւորութիւն՝ կենդանացնում է դասը, հեռացնում ձանձրութիւնը դաստան միջից և հետզհետէ զարդացնում մանկան դասողութեան, զննողութեան և խօսքի կարողութիւնը:

Այդպիսի դասերը, որ ամենայն ժամանակ կարողէինք անուանել խօսակցական վարժութիւններ, պէտք է ընթացակից լինին ընթերցանութեան դասերին, այս խօսակցութեան նիւթերը հարկաւ պէտք է առնուին արդէն կարդացած (կամ պատմուած) դասերի միջից, սակայն պահպ անեղով նոցա մէջ սիստեմատիքական հետեղականութիւն, ներքին կազմակցութիւն:

Դիստերվէդի<sup>\*</sup> ասեմբ ամենոց առաջ մենք պիտի առաջարկենք աշակերտի զգայութեանը

\*) Ադոլֆ Դիստերվէդը ծնուած է 1790 թ. Հոկտեմբեր ամին Զինեգում (Գետաֆալայում) և մեռած է 1866 թ. Փետրվար ամին Բերլինում:

Նա իւր կեանքի առանել քան քառասոն տարիքը նուիրեց աղջային լուսառութեանը և հաստատ քայլերով աշխատու ի էր մշակել ու իրադրծել իւր ուսուցիչ գետապայցոց միտքը. — տալ մարդուն այնպիսի դաս, սիմբոլիկութիւն, որ հիմնուած լին աղաստ զարգացման միբայ և որն ին բնադրժունէութեան միջոցով շնէ նորան անկախ և անձնիքան

Ի՞ գերմանացի գրողի կարճ խօսքերն աելի լաւ են նկարագրում Դիստերվէդի գրծոնէութեան բնաւորութիւնը. — Պրուսիան շնել է ույն գետի վերայ լեռք ա, հարկաւ բերդեր, որ պաշտպանէ տէրութիւնը զրացի թշնումներից, բայց նա շնեց և մի ուրիշ տաւակը

արտաքին աշխարհի իրական առարկաները և  
ստիպենք մանուկներին իւրացուցանել նորա  
անուններն ու նշանացոյցները, ինչքան առա-  
ւել կատարեալ ու պարզ կերպով առարկան  
կարողանայ տպաւորութիւն գործել արտաքին  
զգայութեան վերայ, այնքան առաւել հարուստ  
և իմաստալի կըլինի խօսակցութիւնը նորա  
մասին, Երբ որ աշակերտը իւրացուցած կրինի  
առարկան իւրանամկացոյցներով, անմիջական  
տպաւորութեամբ, այն ժամանակ հարկաւոր է  
ստիպել նորան այդ նշաններից կազմել մի  
ընդհանուր նիրկայացումն, Երբ աշակերտը կազ-  
մած կըլինի այդպիսի պարզայաց ներկայա-  
ցումն միքանի առարկաների մասին, այն ժառ-  
մանակ պէտք է կարողանայ նա միանշան  
առարկաներից կազմել մի ամրող հասկացո-  
ղութիւն, ենթարկել այդ առարկաները յայտնի  
ընդհանուր նշանացոյցների, կազմել ըստ այդմ  
իւր համար զիտելիք քանի մի նոյնակիութ առ-  
արկաների մասին և վերջապէս պէտք է կա-  
րողանայ արտոյայտել իւր հասկացութիւնը

---

զօրեղ բերդ — ազգի կրթութիւնը, և այս վեր-  
ջին ամենայուսափ բերդը շինելու մէջ նորան օգնեց  
դիստելիքը, որպէս հմուտ ճարտարապետ իւր գործի  
մէջ:

պատշաճաւոր ընդհանուր խօսքով, Դասաւուու-  
թեան այսպիսի ընթացքը համապատասխան  
է մարդու հոգեկան բնութեանը, ուստի և զա-  
է այն միակ ուղիղ ճանապարհն, որով կարելի  
է հոռացնել ներկայացման ամեն մի մթութիւ-  
նըն ու զատարկութիւնը, ամեն մի անհասկա-  
նալի ու մեռեալ բառերի և դարձուածների  
անզիր սերտումն, այս ճանապարհնը միայն  
կարելի է տանել մանկանը դէպի գըտկան ի-  
մացութիւն:

Եւ այսպէս խօսակցական զարդացուցիչ զա-  
մերի նիւթերը պէտք է զասաւորել հետեւեալ  
կարգով.

- 1) Դասաւուն մէջ զանուող առար-  
կաների անունները,
- 2) Նոցա մասերը,
- 3) Նոցա նկարագրութիւնը,
- 4) Նոցա համեմատութիւնը, այ-  
սինքն նմանութիւնների ու զանազանութիւնների սրուցելը,

5) Սինոյն կարգով վարժութիւններ որոշել  
զանազան առարկաների վերայ.

6) Ծանոթութիւն երկրաշտիական մարմն-  
ների ձևերի հետ.

7) Բնական պատմութեան սկզբունքն՝ խօսակցութիւններ մարդու, ընտանի անհասունների և պարտիզի բայսերի մասին։

8) Խօսակցութիւններ բնակութեան տեղերի մասին։

9) Խօսակցութիւններ կրակի, օդի, ջրի, հողի և դոցա երեսյթների մասին, և

10) Զանազան մեռի բնական և արհեստական առարկաների ու բնութեան երեսյթների առաւել ընդարձակ նկարագրութիւններ։

Այս նիւթերի վերայ զասախօսութիւնը կարող է տեսել ուսման առաջին երկու կամ երեք տարիներում։

Մնում է այժմ ասել, որ վերը յիշուած հանակը — խօսակցական մետօղը կարուրապէս պահանջվում է սկզբնական շրջանում, պատճառ, միայն այդ եղանակը չառ չէ օդտաքեր բաւականին զարգացած մանուկների համար, որովհետեւ այդպիսով նոցա ինքնազործունէական ոյժը միշտ կըմնայ։ Առնչքան հաստատ կարող է լինել ինքնագործունէութիւնը այն մանկան, որ չէ կարող իւրովի կանոնաւոր խօսքով պատմել մի որ և իցէ ամբողջ ընդարձակ բան, այլ կըկարօտի, որ ամեն մի նախաղատութեան, ամեն մի կարճ մաքի հա-

մար ուսուցիչը հարց առաջարկէ նորանո Ա. յսպիսի մանկան մէջ անզօր է միշտ ոչ միայն ինքնագործունէութիւնն, այլ և հաստատ կամքըն ու յիշողութիւնը։ Ինքն ըստ ինքնան հետում է ուրեմն, որ մանկան զարգանալու չափով խօսակցական հարց ու պատասխանական և իրացուցական ձեւ պիտի տեղի առ ճառական, պատմողական ձեխն։

## Բ. Գրադիտութեան սկիզբն

Հին ձեի, մամնաւորապէս ասեկով, սկզբնական դասատութեան միանման ու մկրենայական ընթացքը մեռցնում էր մանկան աշխոյժը։ — այս փորձով զիտէ մեղանից իւրաքանչիւրը։ Ո՞ւմ համար էլ, որ վարժատունն էլ որ կամիս, չի երեացնել իրը բանդ, որ զդթայում էր մանկան հոգու բնական ձգտումները, որ ամենայն կերպով պատժում էր նորամատաղ կեանքի բնական շտրժումները։ Հասկանալի է, որ այս յառաջանում էր նորանից, որ ուսուցիչը չէր ճանաչում ոչ իւր աւանդած առարկայի բնաւորութիւնը, ոչ իւր մանուկ աշակերտի հողին, որ և կարողանար իմանալ, թէ իւր դասը կամ վարժունքն ինչ-

պիսի ազդեցութիւն կանէ մանկան հոգու վերայ այս կամ այն հանգամանքների տակ, այս կամ այն դիպուածուու: Աշակերտի ուսումնառութեան ամբողջ ընթացքի եղանակը՝ դաստան մէջ պատահող, շատ անդամ չնշին երեացած, զանազան երեսոյթների ազդեցութեան արգասիքն է. մինչև անդամ կարելի է ասել վստահօրէն, որ նա այդ եղանակն ուսումնարանական նոյն խոկ առաջին քանի մի օրերի ազդեցութեանց արգասիքն էլ է:

Հետ է հասկանալ ուրեմն, թէ ինչքան պէտք է ջանալ գրաւիչ ու հաճելի կացուցանելու աշակերտի համար ուսումնարանական ազդեցութիւնները: Հասկանալի է նոյնպէս, թէ ինչքան կարեոր է այդ մանկան ուսումնարան մանելու առաջին խոկ օրը, քանզի նորեկը առանց այն էլ ներկայացրած է լինում իրան ուսումնարանը զանազան ահարկու կերպարանքներով այն սպառնալիքների ազդեցութեան տակ, որոնցով լնաւանփքի մէջ, նորա մանկական վառվուուն անհանգստութիւնը զապելու համար, ցոյց էին տալիս ուսումնարանի վերայ, իբրև նորա պատժարանի, նորան սանձահարելու տեղի վերայ.

Ուսումնառուութեան սկզբի ձանձրացնող ու խրտնացող ազդեցութիւններից մինն էլ այն կըլինի, եթէ որ ոտք զրեց մանուկին ուսումնարանի չեմքից թէ չէ անան խոկոյն նորա ձեռքը բերան անելու մեր այբ այբներըն ու թենայբրաները:

Սկզբի քանի մի զասերը դեռ ևս կարելի է գոհել մանկանը դասատանական կարգ ու պատշաճաւորութիւններ, նստիլ վեր կենալ սովորցնելու, նորան ճանաչելու և նորանից ճանաչուելու համար: Դորանից յիտոյ էլ դեռ կարելի է վարժեցնել նորան որքան և իցէ կանոնաւոր պատասխանների մէջ թեթև խօսակցութիւններով, և ասդա ի վերջոյ մատչիլ զրավարժութեանը:

Գրավարժութիւնը սկսելիս նոր և ամենայրմար մետուն է հնականը: Ա. յդ մետողի նըպատակամերձ և օգտակար լինելու մասին աւելրոդ է անգամ խօսել. նորա զարգացուցիչ և կենդանի բնաւորութիւնը հոգեբանաբար հաստատած են արդէն երեսի մանկավարժները.

Առաւել հարկաւոր կըլինէր կարճառօտ ցոյց տալ նորան գործազրութեան եղանակը:

Ահա Ուշնակու տուած մի օրինակը, որ օրինել է նա Շերոփի զասերի գրութեան համեմատ:

Ուսուցիչը չըլերկացնելով աշակերտներին տեղերից առում է. «Նշառեցէք, տղերը, թէ ինչ հնչւն կասեմ»—և բարձր ու երկար արտասանում է ա. «Հնմայ դռւ ասմ, Արշակ, դռւ էլ Պօղնս, եացն».

Ուսուցիչը պահանջում է, որ աշակերտները արտասանեն հնչիւնը բարձր և որոց դորանից յետոյ ասում է. «Ես կասեմ այժմ մի ուրիշ հնչիւն—օ:—Կրկնիր նորան դռւ, դռւ, և այլն. Այ», հիմի մենք երկու հնչիւն դիտենք և և օ: — Քանի հնչիւն զիտենք, վահան, Ո՞րն է առաջինը, Մուշեղ, որը երկրորդը.....Ասացէք առաջ առաջինը, յետոյ երկրորդը. առաջ երկրորդ, յետոյ առաջինը. Այժմ ասացէք մինումիջ, մէկդ ա, միւսդ օ: առաջին շարք, երկրորդ, երրորդ, եացն».

Այս միջոցը խոր ամեն նմանութեամբն ու անակնկալ փոխիմունքներով շատ լաւ կերպով զրապեցնում է ամրող դասատան ուշադրութիւնը, դասն ընթանում է կենդանի կերպով, մանկունք չեն ձանձրանում, իւրաքանչչիւրը սպասում է, թէ իրան կընարցնեն և մասնակից է լինում ընդհանուր դործունէութեան մէջ:

Առաջին երկու հնչիւններից յետոյ ուսուցիչը միևնույն ձեռվ ձանօթացնում է երրորդի հետ (է կամ ո՞): — Երբ որ մանկունք պատասխանեցին ճիշդ, արագ ու պարզ կերպով, այն ժամանակ անցնում է ուրիշ վարժութեան,

Նա հարցնում է. ինչպիսի հնչիւններ էք սպափորել զուգ: Ո՞րն է առաջինը, երկրորդը, երրորդը. բայց ահա ես ձեղ կասեմ մի ամրող րառ ո՞ս: ՞որ հնչիւնն է այսակդ և թէ օ, թէ սի—օ—օ—օ—օ:

Սրամիու աշակերտներն առաջին անգամից կարող են իմանալ. իսկ եթէ ոչ ոք չիմանայ, ուսուցիչը կասէ ինքը, երկու կամ երեք բառից յետոյ ամենը էլ սկսում են իմանալ ի հարկէ սկզբում զեռ ոչ առանց սիմանների: Պէտք է առնուլ այնպիսի միավանկ բառեր, որոց հնչիւնները պարզ արտասանուելիս լինին, օրինակ — շատ, ուր, տէր, սէր, խոտ, վատ, մատ, զա, մի, ձի, օր, ուր, սուր, քար, ճար ևայլն:

Այսիսի կարգով էլ պիտոյ է ծանօթացնեկ մանկանց մնացած ձայնաւորների հետ, դարձեալ մի-մի տառ իւրաքանչիւր դասին:

Ընդհատելով այստեղ այդ օրինակելի դասի շարունակութիւնը՝ խորհուրդ եմ տալիս ուսուցիչներին, որ ինքնամնք աչքի տակ ունենան

Ուշնակու ամբողջ զրբոյից, որ գրել է, նա կա-  
սատունների համար իրբ առաջնորդ իւր յօ-  
րինած «Родное Слово» անունով ընթերցարան-  
ների վերայ դաս տալու ժամանակ։ Այս մա-  
նաւանագ հարկաւոր է նորա համար, որ յիշեալ  
աշխատութիւնն, որ արած է, ինչքան կարե-  
լի էր յարմարացնելով մեր կիանքին, պ. Ն.  
Տէր-Ղեռնդեանցը, մի պատշաճ ընտրութեամբ  
ընդունուած է մեղանում իրբ լիզուի սկզբնա-  
կան դասագիրք, և որի հետ սակայն դրած չէ  
նոյն զրբի վերայ պարագանելու եղանակը։

(Օգտակար է ունենալ ակզմական ուսուցչի  
համար ընդ աչօք Պետերբուրգի ուսուանողների  
հրատարակած հետարդար և գրելու հրահանգն  
նոյն)։

## Գ. Ընթերցանութիւն

Ոչինչ այսպիսի բան չըպէտք է կարդայ ա-  
շակերան, որի միտքն անհասկանալի լինի նո-  
րա համար, անդիտակից, մեքենայական ընթեր-  
ցանութիւնը կըբթացնէ աշակերտի ընդունա-  
կութիւնը. ուստի ամեն մի յօդուած, որ պի-  
տի դառնայ դասի նիւթ, պահանջում է բա-  
ցատրութիւն ուսուցչի կողմից։

Նախ և յառաջ ուսուցիչը մէկ անդամպէտք է  
կարդայ աշակերտների համար գասը, բայցատրե-  
լով ամեն մի նոցա համար անհասկանալի բառ  
կամ դարձուած, վերջացնելուց յետոյ պէտք է  
հարցնէ մի աշակերտի կամ ամբողջ դասատա-  
նը բայցատրուած բառերը, նոցա մտքում աւե-  
լի հաստատ տպաւորելու համար։ Դորանից  
յետոյ ուսուցիչը բաց է անում խօսակցութիւն,  
հարց ու փորձ, կարդացած յօդուածի ներ-  
քին պարունակութեան մասին։ Յետոյ կարդում  
է մէկ անդամ ևս, պատուիրելով աշակերտնե-  
րին ուշք դարձնել իւր կարդալու եղանակի  
վերայ. ի վերջոյ կարդալ է տալիս մի-մի աշա-  
կերտի այս կամ այն նախադասութիւնը կամ  
պարբերութիւնը, պահանջելով կարդալ ցոյց  
ուուած եղանակով, — պարզ որոշ, բարձր ու  
փուան։ Ուսուցիչը սովորցնում է ևս գանել ու  
շեցնել իւրաքանչիւր նախադասութեան մէջ  
այն բառը, որ զիմաւորապէս առաջարկուած  
է լսողի ուշագրութեանը։

Այս կարելի է հասկանալ կամ նախընթաց  
իուոքի բովանդակութիւնից և կամ մտաւորա-  
պէս հարց առաջարկելով նախադրութեան  
համար։

Դժուար է մինսյն դասին արգեն պատրաս-  
տի դասն էլ հարցնել, յետագայ դասի նախա-  
պատրաստութիւնն էլ անել վերջը յիշուած ձե-  
տվի, ունելովի նկատի դասառների մէջ աշա-  
կերտաց թուի բազմութիւնն և մի և նոյն ժա-  
մանակ դասամիջոցի կարճութիւնը: Այս պատ-  
ճառով հարկաւոր կը լինի մի դաս անցկացնել  
յետագայ դասի նախապատրաստութեամբ, միւ-  
սում արդեն պատրաստի դասը համար առնուլ:

Աշակերտները կարգալու կամ պատասխանե-  
լու ժամանակ, նոյս սխալները թէ ըստ առո-  
գանութեան, թէ ըստ տրոհութեան և թէ ըստ  
բացատրութեան չի ուղղում ուսուցիչն ինքն,  
այլ աշակերտները, Երբ որ սխալնում է պա-  
տասխանողը, միւս աշակերտներն անձայն  
ձեռք են բարձրացնում, առանց տեղերիցը վեր  
կենալու, և ում որ ուսուցիչը պատուիրում է,  
նաև է միայն պատասխանում, եթէ ևա էլ օր-  
ինալիում է՝ ուրիշին է հարցնում, եթէ մէկն  
ուղղում է պատասխանողի սխալը, հարցնում է  
այդ մասին միւսների կարծիքն էլ: Իսկ եթէ ոչ-  
որ աշակերտներից չի կարողանում ուղղել որ  
և իցէ սխալը այն ժամանակ ուսուցիչն ինքն  
է ուղղում, կը կնել առաջի ուղղածը պատաս-  
խանողին:

Այսպիսի եղանակով էլ պէտք է անցնել ուսա-  
նաւորները, որ քանի մի վերաբերութեամբ մեծ  
նշանակութիւն կարող են ունենալ, ուստի եւ  
նոյս ընտրութիւնն արած պէտք է լինի խո-  
հականորին: Ուշք պէտք է դարձնել ուսանա-  
ւորի ոգու, բանաստեղծական լեզուի, ոճի և  
նորա ներքին կենդանութեան վերաց: Ուսա-  
նաւորը արծարծում է մանկան ճաշակը, ուստ-  
ցանում է զննել առարկաները բազմակողմանի  
հայեացքով և սիրել ընութեան գեղեցկութիւն-  
ները, և վիրջապէս շարժում է մանկան մէջ  
բարյոյական և հայրենասիրական զգացումներ:

Կարծեմ բաւականին հասկանալի է, թէ լաւ  
է չըտալ ամենեին, քան թէ տող սովորելու  
այնպիսի ուսանաւորներ, որոնք իրանց սառն  
անհամ ու ձանձրալի բավանդակութեամբն ու  
ոճով կարող են առաւել ձանրաբեռնել ման-  
կան յիշողութիւնն և հանդցնել նորա ճաշակն  
ու քնքոյչ զգացումն:

Այսպէս համառօտ կերտով սրոշերոց յիշոյ  
զիտակից կամ բացատրական ընթերցանու-  
թեան նշանակութիւնն ու եղանակը, յաւելաց-  
նում եմ այս ես, որ օդապակար ու կարեար է  
ընթերցանութեան դասերին աշակերտ ման-  
կանց մէջ տրամախոհութիւնն էլ զարգացնել,

ժամանակ առ ժամանակ պահանջելով, որ նո-  
քա նկատեն և անուանեն այս կամ այն առար-  
կայի յատկութիւնները, համեմատեն միմեանց  
հետ նորանց և երբեմն բերանացի, երբեմն  
գրաւորապէս արտայայտեն իրանց կազմած զիւ-  
աելիքը նոցա մասին, սակայն սորա մասին ա-  
ռաւել պարզ խօսած է «ԵՄետօդ» վերնագրով  
գլխի մէջ։

### Դ. Քերականութիւն.

Մինչև չորրորդ տարին ի հարկէ չի կարելի  
քերականութիւնն աւանձին դաս համարել եւ  
աւանդել սիստեմայի տակ դնելով նորան, բայց  
կարելի է փոքր ի շատէ գրադիատութեան մէջ  
զարգացած մանուկներին սոցա համար մանզա-  
լի կերպով անգամ, ընտելացնել քերականա-  
կան սկզբանց հետ, այսինքն, երբ նոքա սոլո-  
մած կըլինին վարժ կարդալ ու դրել, կարո-  
ղացած հասկանալ ու պատմել կարդացածը և  
կամ զրաւոր կերպով արտայայտել մի փոքրիկ  
միտք որքան և իցէ կանոնաւոր ձեռվ, այն ժա-  
մանակ ամենօրեւայ արամարանական խօսակ-  
ցութիւններով կարելի է սկսել վարժեցնել նո-  
րանց որոշելու միտքը, նորա զլիսաւոր և երկ-

բորդական մասերն, որոչելու առարկաների ա-  
նուններն, այլ և այլ յատկութիւն, գործողու-  
թիւն, գործողութեան հանգամանք, բացազան-  
չութիւն, հրաման ու հարցմունք ցոյց առևոզ  
բառերը, նոյնպէս ևս առարկաների թիւը և  
գործողութիւնների ժամանակն, առանց գործ  
ածելու ուսումնական բառեր (տերմիններ)։  
Այս բոլորը, յայտնի բան է, կընթանայ փոքր  
առ փոքր և ինչպէս ասուեցաւ ամենին չի  
կազմիլ առանձին դաս, այլ կըորդուած կըլինի  
նոյն խել ընթերցանութեան դասերի հետ։

Ուսումնական չշրջանի չորրորդ տարրուց ար-  
դէն կարելի է քերականութեան ուսումն սիս-  
տեմայի տակ դնել և անցնել կանոնաւոր ըն-  
թացքով։ Ամենից յարմար մետօդը քերակա-  
նութեան մէջ կըլինի համակեղունական ասլածը։

Թողլով խօսել այս մետօդի էռութեան և օգ-  
տակարութեան մասին, այս միայն կ ասեմ, որ  
մի անզամ ընդմիշտ պէտք է ջնջել ուսում-  
նարանի միջից այն մեսեալ ու մեռուցանող  
ձեր, որով ստիպում էին մանուկներն անզիք  
անել անթիւ չոր ու ցամաք կանոններ քերա-  
կանութեան բոլոր մասերից, առանց մի գործ-  
նական կրթութեան, և որ առաւել վասն է,  
նոցա համար բոլորովին անհասկանացի գրոց  
լիզուով։

Հինգերորդ տարտում՝ արդէն լիամասն զիտե-  
լիքներով կարելի է վերջացնել աշխարհաբարի  
քերականական ուսումն: Գլխաւոր տիրապետ  
առղ դորձն այդ տարում քերականութեան և  
առ հասարակ լեզուի դասերի մէջ պէտք է լի-  
նի աշակերտաների կողմից ինքնուրուն զրաւոր  
աշխատութիւններ:

Վեցերորդ տարում, բացի զրաբար լեզուից,  
որի մասին ներքեւ պիտի խօսեմ, կարելի է  
ծանօթացնել և մատնադրութեան տեսութեան  
սկզբանց հետ, այսինքն—լեզուի գործունէու-  
թեան, ոճերի, ձեերի ու տեսակների հետ:

Իսկ եօթերորդ տարին, որ կազմում է մեր  
ուսումնարանի ուսումնական շրջանի վերջն  
տարին, կարելի է բոլոր սովորածների մէջ  
ընդարձակ կերպով կրթել և ընակլացնել լեզ-  
ուի ոճական հարստութեանը հետ:

### Ե. Պրաբար լեզու.

Հարկաւոր չէ մեղ ոճաւոր ու խրթին շա-  
րադրութիւններ անել զրաբար լեզուի, բաւա-  
կան կըլինի ուրեմն մեղ ուսանել նորան այն-  
չափ, որ առանց գժուաբութեան կարողանանք  
թարգմանել ու հասկանալ մեր հին մատենա-

զիրների զրուածները, հասկանալ և սուրբ զիր-  
քը, որ նոյնոյէս կայ և մնում է զրուած զրա-  
բար լեզուվ: Եւս առաւել կարենոր ու անմերժե-  
լի է մեղ ուսանիլ զրաբարն այն պատճառով,  
որ մեր եկեղեցական բոլոր երդասացութիւն-  
ներն ու սուրբ զրուց ընթերցանութիւնը կա-  
տարիւմ են նոյն լեզուով: Ծայրայեղ մոլորու-  
թեան մէջ են ընկնում նոքա, որոնք ձգտում  
են մերժել զրաբարը Զայ ուսումնարանից (ի-  
նարկէ խօսքս տարրական ուսումնարանների  
մասին է), ինչպէս ծայրայեղ կերպով մոլոր-  
ուած էին և նոքա. որոնք նորան էին միայն  
համարում ուսումնատութեան միջոց և ար-  
համարհում կենդանի աշխարհիկ լեզուն:

Յօդուածիս սկզբում արդէն ասել եմ, որ  
զրաբարը պէտք է ջանալ կցորդել աշխարհա-  
բարին աստիճան առ աստիճան և փոքր առ  
փոքր. այժմ աւելացնում եմ, որ նորան կարդիի  
է միսել, երբ մասուկները բաւական զար-  
դացած կըլինին մտաւորապէս և բաւական  
վարժուած լեզուի մէջ, թէ զրաւորապէս և թէ  
բերանացի կարողանալով հաղորդել իւրեանց  
միտքը բաւական կանոնաւոր ոճով աշխար-  
հիկ լեզուով:—Բայց ինչպէս յօդուածիս ըն-  
թացքից կարելի է տեսնել, զարդացման այդ

աստիճանի վերայ կարող են լինել մանուկներն ուսումնառութեան հինգերորդ տարումն։ Այդ ժամանակ ուրեմն կարելի է սկիզբն առնուլ զրաբարի ուսման առաւել ու առաւել բաղադրելով կցորդումն աշխարհաբարի հետ և անցանելով համեմատական մետով, որ ամենայարմարն է լեզու ուսանելու դործում։

Հինգերորդ տարում հեշտ կըլինի մանուկների համար զրաբար լեզուի ամբողջ սառւզարանութիւնը լաւ սովորել քանդի աշխարհաբարի մէջ նոքա արդէն իւրացւցած կըլինին մի և նոյնը, և այս կարող է շատ օժանդակել նորանց։ Վեցերորդում նոքա չեն դժուարանալ նոյնպէս ուսանիլ ամբողջ համաձայնութիւնը, պատճառ այդ տեղ էլ արդէն նախապատրաստուած կըլինին աշխարհաբարում։

Խակ հօթներորդում կարելի է լաւ ծանօթանալ զրաբար մատնադրութեան հետ։

Գրաբարի քերականութեան մէջ համակենդրոնական ձևը պէտք է թողուլ և անցնել նորան սովորական սիստեմայով, միայն թէ ի՞նարկէ գործնականօրէն։

Կըկրկնեմ դարձեալ, որ զրաբար լեզուի ուժան մէջ մեծ օգնականութիւն կարող է ցոյց տալ համեմատական եղանակը։

գիրների զրուածները, համականալ և սուբր դիքը, որ նոյնպէս կայ և մնամ է զրուած զրաբար լեզուով։ Եւս առաւել կարենոր ու անմերժելի է մեզ ուսանիլ զրաբարն այն պատճառով, որ մեր եկեղեցական բոլոր երգասացութիւններն ու սուբր զրոց ընթեղցանութիւնը կատարված են նոյն լեզուով։ Ծայրայեղ մարդութեան մէջ են ընկնամ նոքա, որոնք ձգուում են մերժել զրաբարը Հայ ուսումնաբանից (ի հարկէ խուզս տարբական ուսումնաբաների մասին է), ինչպէս ծայրայեղ կերպով մոլորուած էին և նոքա, որոնք նորան էին միայն համարում ուսումնատուութեան միջոց և սորհամարհում կենդանի աշխարհիկ լեզուն։

Յօդուածիս սկզբում արդէն ասել եմ, որ զրաբարը պէտք է ջանալ կցորդել աշխարհաբարին աստիճան առ աստիճան և փոքր առ փոքր. այժմ աւելացնում եմ, որ նորան կարելի է սկսել, երբ մանուկները բաւական զարգացած կըլինին մտաւորապէս և բաւական վարժուած լեզուի մէջ, թէ զրաւորապէս և թէ բերանացի կարողանալով հաղորդել իւրեանց միաքը բաւական կանոնաւոր սծով աշխարհիկ լեզուով։ — Բայց ինչպէս յօդուածիս ընթացքից կարելի է տեսնել զարգացման սցը

առտիճանի վերայ կարող են լինել մասունքներին ուսումնառութեան հինգերորդ տարումն.

Այդ ժամանակ ուրեմն կարնի է սկիզբն առնել դրաբարի ուսման առաւել ու առաւել բաղադրելով կցորդումն աշխարհաբարի հետ և անցանելով համեմատական մետոդով, որ ամենայարմարն է վեցու ուսանելու դործում:

Հինգերորդ տարում հետ կը լինի մասունքների համար դրաբար լազուի ամբողջ ստուգաբանութիւնը լաւ սովորել քանզի աշխարհաբարի մէջ նոքա արդէն իւրացուցած կը լինին մի և նոյնը, և այս կարող է չառ օժանդակել նորանց: Վեցերորդում նոքա չեն դժուարանալ նոյնպէս ուսումնիլ ամբողջ համաձայնութիւնը, պատճառ այդ աել էլ արդէն նախալատրաստուած կը լինին աշխարհաբարում:

Դակ հօթներորդում կարեի է լաւ ծանօթանալ դրաբար մասունքայրութեան հետ:

Գրաբարի քերականութեան մէջ համակենդրունական ձեռ պէտք է թողուլ և անցնել նորան սովորական միստեմայով, միայն թէ ի հարկէ դործնականօրէն:

Կը կրկնեմ դարձեալ, որ գրաբար լեզուի ուսման մէջ մեծ օգնականութիւն կարող է ցոյց տալ համեմատական եղանակը:

## Q. Գրաւոր աշխատանք.

Գրաւոր աշխատանքը երկու տեսակ է. մէկը՝ կը լեզուի ուղղագրական, իսկ միւսը՝ քերաբանական և տրամաբանական կողմերը զարգացնելու նպատակով. Առաջին տեսակն, որ է թերագրութիւնը, կատարվում է դաստանն մէջ, իսկ երկրորդ տեսակ աշխատանքը տուն է կարող է տրուել:

Այսպիսի բաղմաջակերտ դաստաններում, որպիսիք ունին մօր ուսումնաբաններն, իմ կարծիքով, թելաղրասթեան, հետեւել եղանակը շատ յարմար է:

Ուսուցիչը նախ և առաջ կարգադրած է լինում, որ բալոր աշակերտները քարատախտակներն առաջներն գրած ունենան, սպունգները ձևակերին. Պարս է կանչում նախ մի աշակերտի գրատախտակի մօտ. առնում է մի յօդուած, զլիսաւորապէս ուսանաւոր և սկսում է ասել. Մինչև որ ուսուցիչը չի վերջացնում խօսքը, ոչ չի սկսում գրել, Խօսքը վերջացնելուց յիսոյ՝ ուսուցիչն երթեմն այս կամ այն աշակերտին կրկնել է տալիս իւր ասածը. գրբել սկսում են ամենքը միասին. եթէ մինը մոռանում է որ և իցէ բառ՝ կամաց ձայնով

հարցնում է ուսուցիչն և ոչ աշակերտաներին: —  
Փաքը դասաւոներում թելաղրութիւնով պարա-  
պելիս ուսուցիչն ասում է մի անդամից կարծ  
կարծ նախադասութիւններ, կամ նոդա մասե-  
րը և կամ սկզբում, մինչեւ անդամ մի մի բառ:  
Հետզնիւէ մանկանց յիշովութիւնն ու ըմբռու-  
նողութիւնը զարդանարու չափով թելաղրու-  
թեան ձեւը տանում է ուսուցիչը հեշտիցը դէ-  
պի դժուարը, պարզիցը դէպի բաղադրեալը,  
մինչի որ և վերջոց ասում է մի անդամից ամ-  
բողջ միամսրեալ նախադասութիւններ:   
Գրելը մերժացնելով յետոյ՝ ուսուցիչը պատ-  
ուիրում է նախ գրատախտակի վերայ դրող և  
ապա մի քանի ուրիշ աշակերտների: Կարդալ  
գրուածը, մասնուկների ուշքը դարձնելով առո-  
գանովթեան և մաքերի կազմութեան ձեսերի վի-  
րայ: Եթէ մի որ և իցէ բառ ոխալ է լինում  
զրած կամ բայց թողած իմաց է անում ու-  
սուցին: և ուղղում: Թէ որ մասնուկներից ոչ  
ոք չէ կարդում գրուածը պատշաճաւոր առո-  
գանովթեամբ և պատշաճաւոր առօնութիւննե-  
րափ, այն ժամանակ ուսուցիչն ինքը կարդում  
է մի անդամ ծանր ու պարզ, որպէս ոփի մա-  
նուկները կարողանան իմանալ, թէ որտեղ ինչ  
առողջական կամ տրոհական նշաններ պէտք է

լինին, որովհետեւ ուսուցիչն ինքը չի ասում  
այդ նշաններն իւր կողմից:   
Ինչ որ աշակերտներն ինքեանք կարող են  
անել իրանց զրուածների հետ, վերջացնում են,  
դորանից յետոյ ուսուցիչը պատուիրում է դնել  
տախտակները սեղանների վերալ, և լսել Գրա-  
տախտակի մերալ ամրող գրուածի նախադա-  
սութիւնների թիւը որոշում է գրողը կամ մի  
ուրիշը. այլ ոճն ցոյց է տալիս, թէ որտեղ ինչ  
կէտ սիստի վնի և ինչն: Ուսուցիչը պատուի-  
րում է զարձեալ առնուր տախտակներն և ա-  
սել, թէ ո՞լ ինչ առողջական կամ տրոհական  
սիստի է արել: Դորանից յետոյ աշակերտներից  
մէկը կամ միւրը ցոյց է տալիս գրատախտակի  
վերայ գրուածի այս կամ այն նախադասութեան  
մէջ տառապախաները. աշակերտները զարձեալ  
միասին սկսում են ստուգել իրանց գրուածը  
տառապախաներն ուղղելու համար: Ամեն մի  
ուղղուած սխալի տակ դիմ պիտի քաշուիք:  
Ի վերջոյ երբ գրատախտակի վերայ գրուածը մի  
անդամ էլ ուղղած է լինում ըստ ամենանփ:  
ուսուցիչը մի անդամ էլ է հարցնաւմ, թէ ո՞լ  
ինչ սիստ էր արել և ապա սկսում է տեսնել  
(թէ որ միջոցը ներում է) աշակերտաների գըր-  
ուածները. արդեօք ուշադրութեամբ ուղղած

են նոքա ամբողջապէս, թէ որ և իցէ սխալ դանցառութեան է տուած:

Բազմաթիւ աշակերտների հետ, ի նկատի ունելով դասամիջոցի կարծութիւնն նո, ինձ շատ նպատակամերձ է երեռում վերը ցոյց տըւած ձեր: Յայտնի բան է, ուսուցչից պահանջվում է այդ ժամանակ մնե զգուշութիւն, որ չըկինի թէ աշակերտները դէպի չարը գործ զընեն նորա հաւատինծայրութիւնը: Ես կարծում եմ սակայն, որ աշակերտներն իրանց զործը կըկատարեն բարենազգութեամբ, պարզութեամբ ու եռանդով, եթէ սովորեցրած լինին նորանց աշխատել, սիրելով աշխատութիւնքն և ցանկանալով օգուտ քաղել նորանից:

Նրբեմ ուսուցիչը, կամ աւելի զարգացած աշակերտներից մէկը կարող է գրել գրատախտակի վերայ մի պարբերութիւն զանազան ուժխաներով, աշակերտները հերթով կուղիւն սըխալները բացատրելով, թէ ինչու այսպէս և ոչ այլապէս պէտք էր գրել: Այս ձեր գլխաւորապէս կարելի է գործածել, երբ մանուկները թուլացած ու ձանձրացած երեան, դա կը գրարթացնէ նորանց և վերանորողէ նոցա աշխայժը:

Մնում է այժմ ասել, որ ինչպէս ամեն մի դիպուածում, նոյնպէս և այս շատ լաւ կըկնէր, թէ որ ուսուցիչները նախապէս պատրաստուենին դիկտանտի դասերին, յառաջադրյան ընտրելով առաւել նպատակին յարմար գրուածներ: Անցնենք երկրորդ տեսակ գրաւոր աշխատանքին:

Ուսուցիչն իւր համար որոշեալ օրերով աշակերտների ասուած դասերից նիւթ առնելով՝ տալիս է նորանց զանազան առաջարկութիւններ զրութեան համար: Այդ առաջարկութիւնները ծառայում են քանի մի նպատակների: Կամ աշակերտի լսած ու կարգացածը նորա մաքում լաւ տպաւորելու համար, կամ նորա մէջ տրամախտութիւնն ու զրաւոր կերպով մտքերի հաղորդման ձեր զարգացնելու համար, կամ առ հասարակ լեզուի կանոններն ըմբռնելի կացուցանելու համար և կամ վերջապէս աշակերտի մէջ ինքնուրոյն գործունէութիւն զարթեցնելու համար:

Ընդ աչօք ունենալով, որ մանուկների զըլիաւոր աշխատանքն ունի այսքան բազմապիսի նշանակութիւն, դորա համար տուած առաջարկութիւններն էլ կարող են զանազան լինել: Զանազան պիտի լինին նոքա և ըստ

դարդացման մանուկների. — մինչև չորրորդ տարին նոցա գրաւոր աշխատասթիւնները կը մինին կարծ նախաղասութիւններով մտքեր — կամ ի պատասխան ուսուցչի հարցերին, կմմ իրեւ քաղուած իրանց կարդացած վորբիկ յօդուածի բավարդակութեան և կամ մի որ և իցէ փոքրիկ հեշտ ոտանաւոր ընդարձակ ոճի փախարկած զարդորդ ասարուց արդէն պէտքէ մկնել հետզհետէ բազադրել աշակերտների զրութիւնը, ընտելացնելով նորանց աստիճան առ աստիճան ինքնուրոյն շարադրութիւնների մէջ, առ ու աշարդիերով նորանց գանսագան նիւթեր (թե մաներ) ի մշակումն, կամ զրել անդով պէս պէս նամակներ, նային.

Հասկանալի է, որ այս բոլոր ասածը վերաբերում է տաւն տրուած գրաւոր աշխատանքին, բայց կան ադիշ, գարձեալ գրեթէ նոյն նպատակներին ծառայով, գրաւոր առաջարկութիւններ, որոնք լինում են զասատան մէջ դասի ժամանակ, Այսպիսիքն են՝ մանր հարցեր կարծ պատասխանների համար առաջարկուած, վերաբերեալ զիմաւրապէս քերականութեան գասկերին։

Ե Պ Պ Յ Յ Պ Պ Պ

Այս շնչեանոցով ձերանք չարդար եղան պրցուն վայցուրով խորհուար և խորհուով մի զիբուն խացու ըստարած ծառ և դաշտ ուստահան հիմնացուրով մի վեց բաժեռ ուղարկու ունեած կացինուոր ընդու ուղարկու ունեած կացինուոր և զիբունով Հայոց լեզուի նախագիծը Ալեքսանդրապոլը վիճակային ուսումնարանի համար(\*), Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Տ. Ա. Մ. Ի. Ն.

Կարդալ հեշտ յօդուածներ և պատմել կարդացած կարծ մարեն իրանց բառերով, անց գիր գիտենալ քանի մի հատ փոքրիկ հասկանալի ուսանաւորներ,

Գրել բառեր ու փոքրիկ նախադասութիւններ որքան և իցէ նորհքով։ Տալ առաջակուած հարցերին լիակատար պատասխաններ։ — Անուանել զասատան միջի առարկաներն ու նոցամասերը, նկարագրել նորանց և համեմատել, այսինքն որոշել նմանութիւններն ու զանազանութիւնները. մինույն կերպով որոշել զանազան առարկաներ և վերջապէս ճանաչել քանի մի երկրաշափական մարմինների ձևեր։

(\*) Այս ուսումնարանի ուսումնական շրջանը բաղկանում է եօթն տարուց, առաջին երեք տարին պատրաստական զասատունն են թղթագնում երեք բամսունքով։

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Տ Ա Բ Ի Ն.

Վարժ կարդալ զանազան յօդուածներ, ըմբռոնելով և պատմելով կարդացածի մտքերը փոքր ի շատէ կատակից խօսքով, անզիր զիտենալ քանի մի զիւրըմբռոնելի սոտանաւորներ: Գրել պարբերութիւններ առանց կոսիտ սխաների և պատասխանել ոչ տղեղ, պատասխանել կատարեալ և ոչ անկապ խօսքերով: Հասկանալ որն է առարկան և որը նորա յատկութիւն ցոյց տուաղ բառը, որոցել կոչական, հրամայական և բացագանչական բառերը: Ծանօթ լինել բնական պատմութեան սկզբանց հնու, այսինքն պարզ եւ հիմնական տեղեկութիւններն իմանալ մարդու, ընտանի անասունների ու թռչունների ու պարտիզի բոյսերի մասին: Նկարագրել մարդու բնակութեան տեղերն եւ իմանալ կրակի, օդի, ջրի, հողի և դոցա աչքի ընկնող երեսյթները:

Ե Ր Բ Ո Ր Գ Տ Ա Բ Ի Ն.

Կարդալ ու հասկանալ ամեն տեսակ պարզ յօդուածներ: իրանց սեպչական կարճ մտքերը արտայայտել զրաւորապէս որքան և իցէ կանոնաւոր կերպով, առանց նշանաւոր սխանների և կանոնաւոր առողջանական ու պրուական նըշաններով:

Քերան զիտենալ ոտանասորներ և բացարբել նոցա մտքերն իրանց բառերով: Առաւել ընկարծակորէն բազմակուլմանի կերպով նկարագրել զանազան սեպչական կարգեր և առնեստաւոր առնեստաւոր կանոնաւոր կարգական սեպչական առնեստաւոր կարգական սեպչական:

կարեսօր երեսյթների հետւ ձանաչել գործողութիւն և զործողութեան հանգամանք ցոյց տըւող բառերն, որոշել նախադասութիւնը, նորա զիմաւոր ու երկրորդական մասերն, այսինքն որոշել ենթական, բայց լրացուցիչ, յատկացուցիչ և միջանկեալ բառերն, այլ և ճանաչել բայերի ժամանակները, եղանակները, դէմքերն ու թուերը:

Ե Ր Բ Ո Ր Գ Տ Ա Բ Ի Ն.

Ընթերցանութեան մէջ, թէ քերանացի և թէ գրաւոր բացարութեամբ հանդերձ, աւելի զարգացած լինի, մի քանի ընտիր ոտանասորներ անզիր զիտենալ և նոցա մտքերը գրել ընդարձակ յարադրութեամբ: Աշխարհաբար քերականութիւնից սիտումատիկաբար իմանալ ամբողջ սառուցաբանութիւնն և զրաբարից առանց սիստեմայի մասնաւոր տեղեկութիւններ ունենալի նախադասութիւն:

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ Տ Ա Բ Ի Ն.

Ոչ մի տեսակ աշխարհաբար զրուածի (ի հարկէ ոչ զիտենական) ընթերցանութիւնն և մտքի ըմբռուղութեան մէջ չըդժուարանալ, շարադրել զանազան նամակներ, անել պէս-պէս նըշկարագիրներ բնութեան պարզ և ամենօրեայ երևոյթների: Դատել կարգացածի մասին առողջամտաբար և իւր մտքերն արտայացնել բերանացի կամ զրաւորապէս, որքան կարելի է տրամադաբանօրէն: Գիտենալ աշխարհաբար քերականութեան համաձայնութիւնը, իսկ զրաբար քերականութիւնից՝ համեմատական եղանակարդական սեպչական:

նակով ամբողջ ստուգարանութիւնը կանանա-  
ւոր կերպով և առանց մեծ դժուարութեան  
թարգմանել աւետարանը,

Վ. ԵՊՑ ԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ.

Առանց քերպականական սխալների և որ-  
քան կարելի է տրամաբանութէն շարադրել զա-  
նազան թեթև յօդուածներ. ծանօթ լինել լեզ-  
ուի գործածութեան ոճերի, ձևերի ու տեսակ-  
ների հետ. վարժ թարգմանել զբարար լեզուն  
և խմանալ նորա ամբողջ քերպականութիւնն  
աշխարհաբարի հետ համեմատաբար:

Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի Ն.

Մանօթ լինել Հայոց հին մատենագրութեա-  
նը և ազատ կերպով թարգմանել ամեն տեսակ  
զբարար գրուածներ. լիովին ուսանիլ լեզուի  
գործածութեան զանազան ձևերը, տեսակներն  
ու ոճերն. Ազատ կերպով շարադրել պէտ-պէտ  
յօդուածներտրամաբանական կապակցութեամբ,  
պարզ թարգմանութիւններ անել և աշխանա-  
բարից գրաբար ևա:

ՀՀ Ազգային գրադարան



NL0330728

